## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
## «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0082, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 9, հեռախոս 52-27-63, 56-12-51, ֆաքս 54-67-90

«18» 03 2016թ. №17-3-4553

Ձեր №

Մտից թիվ –

**Ինֆորմացիայի ազատության կենտրոն**
**ՀԿ նախագահ Լիանա Դոյդոյանին**

**Հարգելի տիկին Դոյդոյան,**

Ձեր՝ 11.03.16թ. N271-ի 4 գրությանն ի պատասխան տեղեկացնում ենք, որ Երևան քաղաքի Ծարավ Աղբյուրի 55/5 և 55/6 հասցեների հարևանությամբ <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ի կողմից շինարարական աշխատանքների կատարումը՝ ՀՀ կառավարության 2006թ. սեպտեմբերի 14-ի N1644-Ն որոշման համաձայն պետք է համաձայնեցվեր Ճանապարհային ոստիկանության հետ, որը չի իրականացվել:

ՀՀ 08.07.2005թ. <<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> N1024 օրենքի 23 հոդվածի 4-րդ կետի համաձայն արգելվում է վնասել կամ աղտոտել ճանապարհի ծածկույթը:

Հրահանգվել է ճանապարհապարեկային ծառայությանը Ծարավ Աղբյուրի փողոցում հսկողությունն ուժեղացնելու և կարգազանց վարորդներին վարչական պատասխանատվության ենթարկելու համար:

**Պետ** **Ա. Հակոբյան**

Կատարող Ա. Սիմոնյան
հեռ. 563418